

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Վեհափառ և սիրելի Եղբայր ի Քրիստոս,

Աշխարհի Փրկչին՝ Հիսուսի Քրիստոսի հրաշափառ Հարության ս. տոնին առթիվ կփութանք Ձերդ Սրբության ներկայացնել Մեր սրտալից շնորհավորություններն ու լավագույն մաղթանքները:

Մեր սրտի խորերեն ջերմեռանդ կաղոթենք, որ ամենաբարին Աստված անփորձ և անխոով պահե ու պահպանե Հայց. ս. եկեղեցին, նվիրապետական ս. Աթոռները և հավատացյալ հայ ժողովուրդը՝ ի խնամս մարդասիրության յուրո, և Ձեզի պարգևե մշտատև առողջություն և երջանկալից երկար կյանք:

«Ձեզ և մեզ մեծ աւետիք.
Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ,

աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո

ԱՆԹԻԼԻԱՍ

* *
*

Մեր Տիրոջ սուրբ Հարության տոնի ուրախ առիթով Ձերդ Վեհափառությանն եմ ներկայացնում, ի դիմաց մեր միաբանության և ժողովրդի, մեր սրտագին շնորհավորությունները՝ մաղթելով Ձերդ Սրբությանը տևական առողջություն, երջանկություն և ձեր սուրբ Աթոռին՝ պայծառություն:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Երուսաղեմի

ԵՐՈՒՍԱՂԵՄ

---

* Տե՛ս նախորդ համարի 7-րդ էջը:

* *
*

Վեհափառ Տեր,

Քրիստոս հարյալ ի մեռելոց.

Մահվան վրա տարված հաղթանակի երգը կրկին մեր հոգին՝ երը կլեցնե հրճվանքով:

Մահվամբ զմահ կոխյաց.

Անմահը, որ մահկանացուի կերպարանք զգեցած էր, իր զգալի մահովը հաստատեց, թե մահը երևույթ մըն էր միայն:

Հարությամբն յուրով մեզ զկյանս պարգևյաց.

Հավերժության իրավունքը կյանքին է: Ու այդ իրավունքին գիտակցությունը և փաստը տրված է համայն մարդկության՝ Հիսուսի հարությամբ, ուրեմն՝

Փառք Քրիստոսի ամենազոր հարության:

Երջանկաբեր այս առիթով ես և մեր հոգևորական դասը, պաշտոնական մարմիններ և հավատացյալ հոտը կուգանք շնորհավորել Ս. Օծությունդ՝ մաղթելով վերակենդանացումը մեր ակնկալությանց և հույսերուն, հաղթանակ բոլոր արդար դատերուն և վերածաղկում մեր եկեղեցիին:

Կմաղթենք միաժամանակ Վեհիդ թանկագին կենաց արևին մշտական շողարձակում և Իր հայրական սիրո ճառագայթում՝ Իր զավակներու սրտերուն մեջ:

Մատչելով ի համբույր Օծելույդ ս. աջին՝

ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Թուրքիո

ՍՏԱՄԲՈՒԼ